

# Տ Ե Տ Ե Ս

ՀԱՆՐԻԿԱՆ ԱՄՍՏԵՎԱՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԳՈԽՄԱՐՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐՅ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ինչպէս նախորդ Թուով հրատարակած էինք, անցեալ ամսոյ 29 ին տեղի ունեցաւ Արև. Տն. Միութեան տարեկան թիվի. ժողովոյ նիստն ի զրատենեալ Միութեան, Զիվէր Պէյ խան, ընդ ատենապետութեամբ Բ. Առևնապետ Անէմեան Մկրտիչ Էֆէնտիի՛ Ա. Ատենապետն բացակայ գանուելով :

Ատեանը բացուեցաւ ժամը 4 $\frac{1}{2}$  ին բար Տաճկաց ի ներկայութեան 26 անդամոց, ժողովոյն օրակարգն էր հետեւալլ:

1. Ընթերցումն նախորդ Ընդ. ժողովոյ ատենազրութեան.
2. Ընթերցումն Տնօրէն ժողովոյ տեղեկազրոյն և հողերուն նկատմամբ կնքուած դաշնազրոյն.
3. Հաշուեկշիռ.
4. Յառաջիկայ տարւոյ հաշուեցոյց.
5. Առաջարկութիւն երկրորդ 500 բաժիններու վաճառման նկատմամբ.
6. Ընտրութիւն Տնօրէն ժողովոյ մէկ պակաս անդամի.
7. Ընտրութիւն կնամակալաց ժողովոյ երկու պակաս անդամոց :

Բար այն օրակարգի նախ և յառաջ նախորդ Ընդի, ժողովոյ ատենազրութիւնը կարդացուելով, ժողովականաց կող-

մանէ առանց դիտողութեան ընդունուեցաւ, յորմէ յետոյ Տնօրէն ժողովոյ Ատենազպիրն ընթերցաւ սոյն ժողովոյ կողմանէ պատրաստուած տեղեկազիրք որոյ կարևորագոյն կետերն հու համառօտել հարկ կը համարինք:

Տնօրէն ժողովը 1886 մարտ 23ին պաշտօնի կոչուած է, զործի սկսած միջոցին Միութիւնս 234 բաժանորդ ունէր, մինչզեռ այսօր 401 բաժանորդ ունի որք 300 բաժնի կը համապատասխանեն, բաժին ուղղներուն Թիւն օր ըստ օրէ աւելնալու վրայ է:

Տնօրէն ժողովոյ առաջին գործը եղած է յանուն Միութեան, Եէտի-զուլէի գուրսը գտնուած ազարակին կալուածատիրոջ հետ կնորուած նախկին առժամանակեայ դաշնագիրն հաստատել՝ Միութեան նկատմամբ շահնաւոր պայմաններով, Տնօրէն ժողովը քաջ զդալով վերոյիշեալ հողերուն վրայ շինութեանց վերաբերեալ կայսերական հրամանսգրոյն վաղընդիմոյթ հանել տալու կարևորութիւնը պէտք եղած պաշտօնական միջոցներուն ձեռնարկած է քանի ամիաներէ ի վեր և յուսադիր է որ անխոնչ չանիւք և յարատեւութեամբ պիտի յաջողի քիչ ժամանակի մէջ փափարուած հրամանագիրն ստանալ շնորհիւ կայսերական կառաւարութեան:

Տնօրէն ժողովը՝ խնայողութեան նպատակաւ, անցեալ տարի թոշակաւոր պաշտօնեայներ չզործածելով ինքն ստանձնած է նաև վարչութեան պաշտօնը և յաջողած է կանոնաւրապէս վարել Միութեան զործերն:

Տեղեկազիրք կր վերջանայ ինչ ինչ պատճառներու վրայ հիմնեալ հետևեալ առարջարկութեամբ, Միութեան երկրորդ 300 բաժիններն ի վաճառ հանել՝ առանց սպասելու շինութեանց վերաբերեալ կայսերական հրամանագրոյն, իւրաբանչիւր բաժնոյ զինը հաղի համար 1200 դրոշէն պակաս չը լինելու պայմանաւ:

Յետ ընթերցման սոյն տեղեկազրոյն, կալուածատիրոց

հետ գտնուած դաշնազրոյն պատճէնի ընթերցումն տեղի ունեցաւ և ապա հետզհետէ կարդացուեցան՝ Միութեան 1886 Դեկտեմբեր 31ի հաշուեկշիռը և նոյն տարւոյ ծախուց հաշիք, Միութեան ծախուցը համար՝ բամանորդաց վճարումմերու հաշիքը որ 3<sup>1</sup>/<sub>2</sub>, տարւոյ շրջանի վերայ բամնուած էր և հուսկ ուրեմն 1887 տարւոյ հաշուեցոյցը։ Սոյն հաշիներուն քննութենէն պիտի տեսնուի թէ մինչև ցարդ 150 տէօնիւմ տեղ ծախու առնուած է Միութեան հաշույն, և սոյն զործողութենէ 20,000 դուրուշի արտաքոյ կարգի շահ մի զոյացած։

Թէպէտ հաշուեթղթոց մէն մի օրինակ խրաբանչիւր ժողովականաց տրուած էր ի ըննութիւն, սակայն անմիջապէս զայն ուստմասափրել անկարեկի լինելով, և նկատելով նաեւ որ Տնօրէն ժողովը ստանձնած է այս տարի վարչական զործերն, Ընդհ. Ժողովը հարկ դատեց և որոշեց այս անգամու համար իւր մէջէն երեք անձերէ բաղկացեալ յանձնամոլով մի ընտրել, որ պաշտօն ունենայ Տնօրէն ժողովոյ հաշուց ճշդութիւնը և օրինաւորութիւնը քննել և ըստ կարելույն մէկ ամսոյ մէջ արդիւնքն տեղեկազրիկ կրկին զումարուելիք Ընդհ. Ժողովոյ։ Սոյն Յանձնամոլովոյ անդամ ընտրուեցան, Խոտարէնեան Աւետիս, Շնորհքեան Յովհաննէս և Շիշմանեան Անդրանիկ էֆէնտիներն։ Միութեանս Ընդհ. Տեսուչ Տէր-Ներաէսեան Տիգրան էֆէնտի Տնօրէն Ժողովոյ կողմանէ առաջարկուած երկրորդ 500 բաժիններու այժմէն վաճառման խնդիրը բացատրելով նորա զործագրութիւնը խնդրեց՝ յայտարարելով թէ նոր բաժիններն առելի սուր զնով պիտի ծախուին՝ աւելադրութիւն 200 դուրս շէն նուազ չլինելու պայմանաւ։

Այլևայլ վիճաբանութենէ յետոյ, ժողովականաց ոմանք փափաք յայտնեցին նոր 500 բաժիններուն միայն մի մասն՝ ի վաճառ հանել, իսկ այլք ամբողջն, յետ քուէարկութեան Տնօրէն ժողովոյ առաջարկութիւնն ընդունուելով նորա խո-

հետութեան յանձնուեցաւ ի պատշաճ ժամանակի և յարմար դատած զնովն իր վաճառ հանել երկրորդ 500 բաժիններն:

Ի վերջոյ երկու ժողովոց պակաս անդամներու ընտրութիւնք կատարուեցան զաղանի քուէարկութեամբ և Խնամակալաց ժողովոյ անդամ ընտրուեցան Բերայի հեռագրատան Տնօրէն Անդոնիատէս Ժան Էֆէնտի և Ռէժիի գործարանի Բ. Տնօրէն Միաաքեան Մինաս Էֆէնտի, իսկ Տնօրէն ժողովոյ անդամ ընտրուեցաւ Մալիյէի պաշտօնեայներէն ծամճը զատէ ծէմալ Պէյ :

Ժամը 8ին ատեանն փակուելով ժողովականք բաժնուեցան ջերմ շնորհակալութիւններ յայտնելով Տնօրէն ժողովոյ և Վարչութեան անդամոց և բարեմաղթութիւններ ընելով վասն կենաց Օգոստավիառ Կայսեր և Միութեան յառաջադիմութեան :

### ԳԻՏԱԿԱՆ ՔԱՂՈՒԱԾՔ

« ՀԱՐՏՎԱՐՔՍ ՍՈՅԵՆՍ ԿՕՍԻԲ » Ա.Մ.Ս.Ա.Թ.Ե.Ր.ԹԻ ՄԵԶԷՆ

Ի ԶԵՐՆ ՄԵՇ · ԱՐԴԱԿՈՒԽԻ ՅՈՎԱՆՆԵՍ ԷՖԷՆՏԻԻ.

ՄԻ ՀՆԱԳՈՅՆ ՀԱՄԱԼՍՈՐՈՆ · — Խտալական կառավարութիւնը որոշած է հանդիսաւորապէս տօնախմբել՝ 1888 ի գարնան մէջ, Պօլնիոյ համալսարանի Ուրինարիւրեռորդ տարեգարձը, Երիտասարդ Խտալիոյ կրթութեանն համար լսուագոյն է հրապարակաւ տօնել հին Խտալիոյ մոտաւորական մեծ գործերն եւ մոտաւորական այնքան կանխաժամոն գերազանցութիւնն, քան սնակիառիլ հին Հռովմոց կոչո՞ թէեւ ազդու, վայրենութեամբն: Երբ կը խորհինք մետասաներորդ գարու Եւրոպիոյ ընդհանուր կացութեան վրայ, կզգամք թէ՝ զարթուցանելու համար զինքը այն խաւար շրջանէն ուրիւր մոտաւոր մշակումն գլխաւորապէս կախումն ունէր խո-

լանտացի թափառիկ քարողիչներէ , համալսարանի մը հիմ-  
նարկութիւնը մեծ դէպք մը եղաւ , եւ տարակուսելի է թէ  
ուրիշ եւրոպական համալսարան մը հնագոյն լինի Պօլօնիոց  
համալսարանէն :

ՆՈՐՎԵԿԻԵՍՆ ԵՒ ՃԱ.ՓՕՆԵԱԽՆ ԶԿՆՈՒՑՈՒԹԻՒՆ . — Հիւսիսա-  
յին ձարօնի ծովերու մէջ մեծ քանակութեամբ բրածուկ (cod-  
fish, Morus) գանուերան առթիւ , ձարօնի Առեւարական նա-  
խարարութիւնը սպաշտնոեայ մը ուղարկած է ՚ի Նորվէկիա ,  
ուսումնասիրելու համար բրածկան արուեստագործութիւնն  
թէ իշնակէս կը կատարուի հոն : Նորվէկիոյ մէջ տարին՝ բացի  
ներքին սպառումէ , 40-50 միլիոն բրածուկ կ'որուացուի ար-  
տածութեան համար : Ասոնք երկու եղանակաւ կը չորցուին .  
մին՝ ձուկը փորէն ճեղքելէ եւ բանալէ յետոյ , երկուսին պո-  
չէն միմեանց կազմել ու կախելով , իսկ միւսը՝ ժայռերու վրայ  
տարած ելով : Բայց աստի այս ձուկերու լեարդէն երկու աե-  
սակ իւղ կը հանուի , մին՝ որ հասարակ ձկան-իւղն է , կը  
գործածուի մէծ քանակութեամբ կաշի գործարաններու մէջ ,  
երկրորդը՝ բժշկական իւղն որ ծանօթ է բրածկան լեարդի  
իւղ (պալըք եալը) անուամբ եւ ունի որպէս յայտնի է մեծ  
սպառում : Առաջին տեսակ իւղը ձեռք կը բերուի , յիշեալ  
ձկանց լեարդերն հակայ կաթսայի մը մէջ եռացընելով , իսկ  
երկրորդ տեսակը՝ խնամուկ ընարուած լեարդերն պաղ կամ  
մի քիչ առաք , ճնշուելով : Այս երկու արտագրութիւններէ ՚ի  
դատ , ձկան գլուխներն՝ մերթ իսկ ստամիքսն եւ աղիքներն  
չորցընելէ յետոյ , փուլոյ կը վերածուին եւ կը ծախուին ֆիսք-  
կուանօ (fiskguano) անուամբ :

ՔԱՐԻ ԻԴ. ԵՒ 0.0.ՊՂ.ՁՈՒԹԻՒՆ . — Տօքթօր Պիլքղիք (Bieleczyk)  
Բօլօնիոյ բժշկական թերթի մը մէջ կը հրատարակէ քարիւղի  
հորերու մէջ բանով գործաւորաց վրայ իւր ըրած դիսողու-  
թիւններն : Նա կը հաստատէ թէ՝ երբ այս հորերու մէջ գըտ-  
նուող կազմ ակատօրէն չնչուի , խելագարական բնութիւն ու-  
նեցող ուժգին ցնորք մը յառաջ կուգայ : Այս վիճակ շուասվ  
կը գագրի երբ գործաւորը գուրս հանուի հորէն : Դիտող  
բժիշկը ընդհանրապէս խօսելով , կը թէ՝ այս գործաւորաց  
մէջ շատ մեռնողներ կը պատահին եւ թուի իսկ թէ՝ սոքա

Հնչառութեան գործարանաց թէ այրեցուցիչ եւ թէ ուրիշ բնութիւն ունեցող ախտերէ կարի զերծ են, ինչոքս նաև փոխանցական հիւանդութիւններէ։ Սակայն ենթակայ են ային (ասւ) ըսուած ախտի նման բորբոքման մը որ կ'ախտաւորէ մարմոյն բոլոր եղբերն (extrémités)։ Յիշեալքժիշկը գրած է նաև թէ չը զտուած քարիւղն ընտիր դեղ մ'է նոր եւ հին, գարշելի եւ թմրացեալ վէրքերու համար։ Առ այս՝ իր հաստատական ապացոյց, յառաջ կը բերէ սա իրողութիւնն թէնըլ (cannel) ըսուած տեսակ մը խակ ածուխի զտմամբ յառաջ եկած գրեթէ քարիւղի նմանող նիւթի մը զտարանին մէջ բանող գործաւորին միայն երեսը, խողովակիներէն միայն մէջ ճնշուած դիւրավառ չողւոյ բոցերէն այրեցաւ։ նա իսկոյն վազեց դեռ չը զտուած իւղ պարունակող ամանի մը քով եւ այդ իւզով երեսը լուաց ջրով լուազու պէս, եւ առանց երեսին վրայ հետք մը մնալու առողջացաւ յետոյ, մինչդեռ ուրիշ երկու նմանօրինակ ողարագաներու մէջ, այդ միջոցին չը գիմողներ՝ ցաւերով սաստիկ տանջուեցան եւ երեսնուն վրայ տձեւութիւն մնաց։ Տքթր։ Բլաթ (Ֆլինտչայր բնակող) գիտած է թէ թիփօ հիւանդութեան ուժգնապէս ճարակած ժամանակ բոցավառ իւղի գործարաններու մէջ բանող գործաւորներն որպէս եւ իրենց ընտանիքն զերծ մնացին նոյն ախտէնն ։ Իրենց հանդերձեղինաց մէջ մուտ գտած չը զտուած բառաֆին իւղը, իրենց բնակավայրերն կատարելապէս մաքրած էր, մինչդեռ նոյն վայրեր բնակող ածուխի հանքերու բանւորներ եւ մշակներ աղետալի վնասներ կրեցին նոյն ախտէնն ։ Այժմ վիրաբոյժք, շատ եւ ստէպ վազըլին կը գործածեն այրածներ բուժելու համար եւ այլն, որ չը զտուած քարիւղի կամ քէնըլէ հանուած այն հեղուկ նիւթոյն յատկացեալ թանձրութիւն տուող ջրածխածինն է։

Քարիւղը՝ նոյնաբուժութեան մէջ (Homocopathée) մէծ դեղ մ'է ներքնապէս գործածուած։

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Ա. Բ Ե Խ Ա Զ Ա Բ Ի Կ

Ամառը՝ զինուորական երկայն ճամբորդութեանց ժամանակ, արեւազարկէ յառաջ եկած մահու արկածները տեղի տուած են (Գերմանացւոց) միջոց վնասել դժբաղդութեանց առաջքն առնելու համար։ Այժմ՝ առքցած զինուորներուն արգիլեալ է ջուր խմել. յրիսրայիզի եղած լիմօնի թթուն ամեն արեւազարկի պատահարներու խիստ օգտակար գտնուած է եւ հետեւաբար յանձնարարուած է՝ ճամբորդութեանց եւ երկար շրջագայութեանց ատեն զայն միատեղ առնել եւ անոյշ ջրով գործածել. ինչպէս կերեւայ՝ դարձեալ նկատողութեան կառնուի այն բժշկական զօրութիւնը որ հազարներով տարի յառաջ կը վերագրուէր լիմօնին, յիրաւի այն առեն չափազանցօրէն։

ՄէՏԻԳՈՒՄ

Ըսել է պարզ լիմօն եւ ջուրը արեւազարկի աղէկ է. զայս զինանալով արեւի մէջ սպասողները լաւ կընեն եթէ հետեւնին լիմօն մը առնեն։

Ծ. Խ.

Ք Ո Խ Ն

Կարելի եղածին չափ մարդս պէտք է միայն գիշերը քնառայ. իսկ յերել ատեն միայն ի հարկին եւ կերակուրէն ետքը, բայց ոչ երկար ժամանակ. լսւագոյնն է յերեկուան քունը փախցնել, բայց անոր փոխարէն հանգիստ ընել. նախաճաշէն եւ ընթրիքէն ետքը պէտք է գոնէ կէս ժամ հանդարտ անցնել հանգիստ արձակ նստելով կամ կոթնելով, բայց ոչ պառկելով. չանգիստ քնանալու համար ալ՝ ամեն երեկոյ պառկելէ յառաջ գոնէ մէկ ժամ առանձնանալու է. անկողնոյ մէջ բնաւ մուածելու չէ, առա թէ ոչ քունը կը փախչի. բայց որովհետեւ միտքը միշտ գործունեայ է՝ մինչեւ

որ մարդս քննանայ , ուստի այն միջոցի մասածմունքը պէտք է դիւրին եւ հաճելի բաներու վրայ ուղղել : Անկողինը՝ ձիւ մազէ , բարձր՝ ոչ խիստ բարձր եւ վերմակը՝ պէտք է բուրդէ ըլլան : Առաւօտուն արթնցած տաեն մարդ պէտք է ցատկէ անմիջապէս . « Ով մէկանց կելնէ թեթեւ կելնէ » կըսէ առածը :

Մէտագործ

## ԵՐԵՒ ՄԵԾ ԲԺԻՇԿԱՆԵՐ

Համբաւաւոր բժիշկ Տիւմուլէն՝ երբ իր մահուան անկողին մէջ պառկած էր իր արհեստակից բարեկամներէն շրջապատեալ , « Տեարք իմ » ըսաւ անոնց « մեռած պահուս երեք մեծ բժիշկներ կը ձգեմ ետիս . » բարեկամներէն ամեն ոք կարծեց թէ ինքն է անոնցմէ մին . խնդրուեցաւ որ անոնց անունը ըսէ . « Ատոնք են » պատասխանեց մեռնողը « ջուրը , շարժումը եւ ուտեսալ » :

ՀԱՅՉԻ, ԸԱՅԻԿՊԲՐ

Որ ըսել է՝ մաքրութիւն , աշխատանք եւ կանոնաւոր կերութութում :

Յ. Խ.

## Կ Ա Թ

Կաթը՝ երկար տաեն կարենալ թարմ պահելու համար , պէտք է կթել՝ անմիջապէս մաքուր շիշերու մէջ հունիփ մը միջոցաւ եւ խիկյն շիշերուն բերանը գոցել մանրարով . յետոյ՝ նոյն շիշերէն աւելի բարձր կաթսայի մը մէջ խոտ զետեղել , շիշերը կաթսային մէջ խոտին վրայ դնել եւ չորս կողմը դարձեալ խոտով պատել՝ այնպէս որ շիշերը իրար չըզարնեն . յետոյ կաթսային մէջ պաղ ջուր լեցնել մինչեւ ԿԱԹԻՆ բարձրութիւնը եւ կաթսան կրակին վրայ դնել եւ թողուլ որ ջուրը տաքնայ եռալու աստիճան . յետոյ կաթսան վար առնել եւ ձգել որ շիշերը մէջը պաղին . եւ վերջապէս շիշերը ջուրէն հանել վրանին մաքրել եւ բերանները կնքել եւ պահել պաղ եւ մութ տեղ մը : Այս կերալով ամիս մը կրնայ պահուիլ կաթը , որ եփուած տաեն թարմ կաթի համ կունենայ :

## ՄՐՑԱՆԱԿ ՏՆՏԵՍԻ

ՄԵԿ ԸՆՏԵՐ ՊԱՏԻ ԺԱՄԱՅՈՅՅ ՈՒԹ ՕՐՈՒԱՆ ԸՆԹԱՅԻՈՎ.

Եօթը հոգիէ բաղկացեալ մէկ ընտանիքի մը՝ որ շաբաթը  
 140 դրուշ վաստակ ունի, տան ծախուց կարգադրութեան՝  
 այսինքն ուտեսատի, հագուստոտի, վառելիքի, ուսանելիքի, հի-  
 ւանդութեան, կարասեաց, զուարձութեանց եւ այլ պիտո-  
 յից գործադրութեան, չափուն վերաբերեալ ծրագիր մը շի-  
 նելու համար մրցում տուաջարկած էինք Տնտեսի Յունուար  
 ամսաթուրյն մէջ՝ վերսիշեալ մրցանակը խօստանալով. ցարու-  
 երեք նամակ եկած է, անոնց վրայ յանձնաժողովոյ որոշումն  
 յաջորդ թուով, իսկ նամակներն հետզհետէ ըստ յար-  
 մարութեան պիտի հրատարակուին: Քիչ ատենէն ուրիշ  
 մրցանակ մ'ալ պիտի առաջարկենք գիւղատնտեսական խնդ-  
 րոյ մը համար:

Մեծապատիւ Տնօրէն-Խմբագրապետ Էֆէնսի

Պատուական Տնտեսիդ չորրորդ թուրյն մէջ՝ ժողովուրդը  
 անտեսադէտ ընելու մասին Զեր բուռն փափաքը աեսնելով՝  
 ուզեցի ես ալ իմովսանն անսալ Զեր հրաւէրին՝ տան ծախուց  
 կարգադրութեան վրայ յօդուած մը գրելսվ, եւ եթէ իս  
 գրութիւնու լաւագոյն գտնէք եւ արժանի համարիք Զեր  
 խոստացած մրցանակին՝ զայն թաղիս վարժարանի նուիրելու  
 համար միայն կընդունիմ, քանզի ներկայս կը գրեմ ազգա-  
 յին փաքրիկ ծառայութիւն մը ընելու փափաքով:

Տան ծախուց կարգադրութիւն կամ տուն, ծախք եւ  
 կարգադրութիւն, մարդկային կենցազավարութեան ամենա-  
 կարեւոր պիտոյք են, առանց որոց մարդկան չկայ հանգիստ,  
 չկայ ասլագայ եւ երջանկութիւն:

Ի՞նչ մարդեր կը ճանաչեմ, ընտանեաց տէր մարդեր, ո-  
 րոց ապագային վրայ երբոր կը մտածեմ սոսկումն կազդէ  
 յիս. առաստ ստակ կը շահին, առաստ կը վատնեն անկա-  
 րեւորին, կը խնայեն կարեւորէն, գրաբաննին դրամ մը չեն  
 աւելցըներ, եթէ որ մը հիւանդ ըլլան՝ պարտքով օրերնին

կ'անցունեն, տան մը տէր չեն, մինչդեռ կրնային կալուածներ իսկ ունենալ՝ եթէ անտեսագէտ լինէին. Երբ այսպիսի ոք երկար ատեն հիւանդ ըլլայ կամ մեռնի՝ թշուառութիւնը նորա տան մէջ բոլորվին կը տիրէ :

Տնաեսութեան վրայ ունեցած փոքր ի շատէ գաղափարս փորձած եմ գործնապէս եւ մեծ օգուտ քաղած անտի :

Արդ խօսքերնիս տան ծախուց կարգագրութեան վրայ ամիսվելով՝ սա խորհրդածութիւններն ունիմ ես :

1º Մարդ որքան ալ քիչ հասոյթ ունենայ՝ պէտք է միշտ շահածէն նուազ ծախսէ՝ ըստ շահած աւուրց մէջ պաշար ունենալու կամ իրեն ապագայն պատրաստելու համար :

2º Մարդ իր տան ծախուց կարգագրութեան մէջ չհետեւելու է անոնց օրինակին՝ որոնք քան զիւրն լաւագոյն կայութիւն մը ունենալով՝ կամ առանց իրենց ապառնին մոռածելու, աւելորդ եւ անտեղի ծախսեր կընեն, այլ հետեւելու է անոնց՝ որոնք ակն յանդիման անտեսագիտաբար եւ պարզասիրապէս կ'ապրին :

3º Խնայութիւն ընելու է այն ծախուց մէջ՝ յորում խնայութիւնը առողջութեան վնաս մը չի տար : Տնաեսագիտութեան գէմ է՝ աժան առնելու համար գէշ ապլանք առնել, վասն զի սուղն աւելի աժան կը լինի իր դիմացկոտութեամբն կամ եթէ ուտելիք է իր սննդարարութեամբն :

4º Խնայելու է զարդու, զարդ արանքի, զրուանաց եւ ի ցոյցս մարդկան եղած ուրիշ ծախուց մէջ : Մարդ ջանալու է միշտ իր շահածէն  $\frac{1}{2}$  20 կամ գոնէ 10 աւելցնել եւ զայն իր ասլագային համար գործածել :

5º Տնաեսագէտ մէկը պէտք չէ որ գինետուններ յաճախէ, ծխախոտ ծխէ, շոայլ մարդու հետ ընկերութիւն ընէ, ի մի բան պէտք է զգոյշ ըլլայ սցն ամենէ՝ որմէ իւր առողջութեան, կամ պատւոյն կամ քսակին վնաս մը կրնայ հասնիլ :

6º Տան ծախքը անտեսագիտաբար վարելու համար լաւագոյն է որ մարդ իր շահածն ինք միայն գիտնայ եւ եթէ մխող ընտանեաց տէր է՝ աւելի լու է որ շահն եղածէն պակաս ցոյց տայ եւ երբեմն ալ գրամական անձկութիւններ յայտնէ :

7º Ծնտեսագէտ ոք բաւականասէր պէտք է լինի, եւ ի՞նչ գեղեցիկ յատկութիւն մ'է բաւականասիրութիւնը, ճշմարիտ հարստութիւն է այն :

8º Ծնտեսագէտ ոք աշխատասէր եւ իր գործառնութեանց մէջ պէտք է արթուն ըլլայ :

9º Մարդ իր եւ ընտանեաց առողջութեան պէտք է մեծ խնամք ունենայ, հիւանդութեան մը սկզբն փոքրիկ տկարութիւն մը երեւալուն պէս՝ պէտք է անմիջապէս դարձման տանի : Տկարութեան մը փոքրութիւնը «բան մը չէ» ըսելով արհամարհելը՝ աեղի կուտայ շատ անգամ մեծամեծ հիւանդութեանց՝ հետեւաբար եւ ծախուց, որով թէ տնտեսագիտական հաշիւը կը խանդարի եւ թէ անձնական եւ ընտանեկան հանդստութիւնը :

Անոնք որ այս խորհրդոյս համեմատ եւ ընտանեկան սիրով կեանք վարեն՝ երջանկութեան ճանապարհէն կ'ընթանան եւ վստահ եմ որ երջանիկ կըլլան եւ այսպիսիք իրենց տան ծալքը կարգադրութեան ևն, վասն զի իմ դաղափարացս եւ վորձառութեանս համեմատ՝ ճշմարիտ կարգադրութիւնը այս խորհրդոյս մէջ ամիտոփեալ է : Աւելլորդ (\*) է % այսքանով ծախուց աեսակները բաժանել՝ տան ծախուց կարգադրութեան համար, վասն զի ամենեւին կարելի չէ միօրինակ կարգադրութեամբ ծախսել, որովհետեւ կընայ ըլլայ որ այս տարի հիւանդութիւն աւելի ունենայ մէկը եւ պարաւորի բժշկի եւ գեղի յատկացուցածէն աւելի ծախսել, կամ ձմեռը սաստիկ ըլլայ եւ ածուխը աւելի վառել եւն :

Ահաւասիկ անտեսագիտութեան կամ տան ծախուց կարգադրութեան օգտակար դատակար դատած եւ գործադրած խորհուրդ-

(\*) Դաէվէթեան էֆէնտիլ նամակն սնտեսագիտական օգտակար խատներ պարունակելուն համար հրատարակած ենք սիրով, բայց իր այն կարծիքը թէ՝ աւելորդ է ծախուց տեսակները բաժնել, սխալ է, նոյն խոկայն պատմաներուն համար ինչ որ ինք կը նշանակէ. քանզի արտաքոյ կարգի հարկադրիչ ծախը մը պատահած ատեն երբ մէկը աչքին առջին կունենայ իր ծախուց ցուցակը, կրնայ տեսնել թէ անոնցմէ ո՞ւն կարելի է վերցնել կամ զեղչել՝ յիշեալ արտաքոյ կարգի ծախքը ցոցելու համար :

ներս ասոնք են. ես այս պայմաններէս քիչ անդամ՝ շեղած եմ, բոյց չափաւորութիւնն ամեն պարագայի մէջ յարգած լինելով՝ այսօր վիճակէս գոհ կեանք կը վարեմ: Այս նիւթիս վրայ իմ խորհուրդներս գուցէ պակաս ունենան՝ այն ատեն սիրով պիտի ընթեռնում ես Զեր պատուական Տնտեսի մէջ աւելի կատարեալ եղած խորհրդածութիւններն եւ պիտի հետեւիմ իսկ անոնց, միայն թէ այն խորհուրդներն յզացողը գործադրած ըլլալն ալ հասաստէ, քանզի փորձեալ խորհուրդներն աւելի կ'արժեն քան լոկ մատացածիններն:

Տէր, Տնտեսագիտութիւնը ես միշտ սիրած լինելով՝ շատ ուրախ եմ զայն ծաւալելու նպատակ ունենալնուդ համար եւ միշտ չնորհապարտ պիտի համարիմ Զեզ զիս:

Ա. Գ. Ա. Ս. Ե. Վ. Յ. Թ. Ե. Ա. Ն.

### ՊԻՏԱՆԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Սոյն վերնագրին տակ՝ տնտեսական, առեւտրական, դպրոցական, տնական, օրինական եւայլ սիթանի խնդրոց վերաբերեալ հարցումներ հանդէսիս մէջ հրատարակել որոշած ըլլալով, յօժառութեամբ պիտ' ընդունիմք մեր բաժանորդաց կողմանէ մեզ ուղղուած այս տեսակ հարցումներն ինչպէս եւ այդ հարցմանց տրուած պատասխաններն: Հարցմունք թէ պատասխանիր պէտք է համառօս ըլլան եւ պարզ լիզուալ գրուած. հրատարակութեան արժանի ըը համարուած գրութիւնը եւ չեն դարձուիր:

49. Տնտեսի 6րդ. թույն մէջ « ջուրն իբրև ըմպելի » վերնագրով յօդուածը կարդալէ յետոյ, բաղդատութեան ասի Տէրքոսի ջուրն որ կրնայ յարմար գատուիլ իբրև ըմպելի գործածուելու՝ ըստ տեղեկութեանց սոյն յօդուածին, որովհեաեւ Տէրքոսի ջուրն ունի պահանջուած ամեն արտաքին յատկութիւն, ինչպէս են փայլուն, անդայն, անհոտ, զով, դիւրաւ խաչել բանջարեղբէններն եւ փրփրացնել աճառն եւն. ստկայն գիտենք որ համարն եւ մանաւանդ պարունակութեանը մասին կարծիքները համաձայն չեն եւ թէ նոյն հակասու-

թերան տեղի տուած են նոյն իսկ բժիշկներն որոց մի մասը կը վկայէ թէ Տէրքոսի ջուրն ոչ միայն ըմպելու յարմար այլ եւ շատ օգտակար է, մինչդեռ միւս մասը հակառակը պնդելով առողջութեան վնասակար կը հրատարակէ ։ Հետեւորար ժողովուրդը եւ մինչեւ անգամ միեւնոյն ընտանիքի անդամներ որ սոյն ջուրը կը ճաշակեն դեր ու դէմ երկու խմբերու բաժնուած են։

Նաեւ վերջին օրերս Յերայի բժշկական ժողովը մէջ սոյն ընկերութեան հմտագոյն անդամներէն մին յայտարարած է թէ Յերայի մէջ օր ըստ օրէ Տէրքոսի ջրոյն գործածութիւնը աւելնալով՝ հիւանդութիւնք աւելի ճարակ գտած են։ Եթէ առարկութիւնն իրաւացի է՝ պարու է հոգ տանիլ եւ օգուտ քաղել սոյն ազգարարութենէ։

Ուստի մասնագիտաց ուսումնասիրութեան յանձնալարելով այս կենսական խնդիրը, փափաքելի է ամենուս գիտնալ թէ Տէրքոսի ջրոյ գործածութիւնն իբրեւ ըմպելի օգտակար է թէ վնասակար։

Մ. Ա.

20. Ակուայի մաքրութեան համար լոնչ գործածելու է։

ԷՄՄՈՒՌՈՒԵԼ

---

### ՀԱԻԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾ Ի ՊԱՆՏԵՐՄԱ

Հետեւեալ նամակն Կայսերական երկրագործական Տնօրին Վասեն Ամասեան Յակոբ Էֆենսիի մասնաւոր ուշադրութեանը կը յանձնարարեն, ինչպէս նաեւ ամեն երկրագործական մասնագիտաց, խնդրելով որ բարեհանին խնդրոյն վրայ իրենց կարծիքը նրատարակել յօդուս ընդհանրութեան։

Տ. Խմբագիր Տնօրիս հանրօգուս հանդիսին։

21. — Յաւելով կ'իմացնեմ Զեղ թէ քաղաքիս ինչպէս նաեւ բոլոր մօտակայ գիւղօրէից մէջ հաւերտ ընդհանուր կոտորած մը կը ափրէ մի քանի օրէ ի վեր, սոյն կոտորած այն-

չափ արագ տեղի կունենայ հաւուց վրայ որ գրեթէ իւր ձռւ  
ածելչն՝ երբ առողջ վիճակի մէջ լինել կը թուի, անմիջապէս  
յետոյ առանց որեւիցէ շարժման միանգամ եւ եթ թափա-  
հարելով կը կնքէ իւր վերջին շունչը, եւ այնչափ բազմաթիւ  
որ տեղոյս արտաքոյ կողմերն՝ ուր կը նետուին դիակներն,  
հաւերու բլուրներ ձեւացած են :

Տեղոյս հասարակութիւնն մեծ մտառանջութեան եւ եր-  
կիւղի մէջ է, մոտածելով թէ մի դուցէ մարդոց եւս տարա-  
փոխի այս սպառիչ հիւանդութիւնն : Ուստի ի գիտութիւն  
մեր եւ յանդորրութիւն յուզեալ մտաց կը դիմեմ հանրօգուտ  
Տնտեսիդ, խնդրելով որ բարեհաջիք պատասխանել թէ հա-  
ւերու սցդ հիւանդութիւնն կրնայ նաեւ մարդոց սպանիչ  
կամ վնասակար լինել, եւ ինչ է դարմանը :

ԹԱԴԻՈՐ Յ. ՇԻՐԻՆԵԱՆ

17 Ապրիլ 1887, Պանքրիմա.



## ՏՆՏԵՍԻ ԲԱՐԵԿԱՄՔ

Տնտեսագիտութեան բարեկամ Մեծապատիւ Միհրան Է-  
ֆէնտի Քիւրքնեան ի Սամսոն նորէն՝ 6 օրինակ, Տնտեսի բա-  
ժանորդ գրուեցաւ զանազան աղքատիկ վարժարանաց նուի-  
րելու համար որոյ վասն կը յայտնեմք մեր մասնաւոր ջերմ  
շնորհակալիքը : Նոյնպէս մեծաւ շնորհակալութեամբ կը յիշա-  
տակենք անուանքն հետեւեալ մարդասէր անձանց, որք նը-  
պաստած են Տնտեսի յառաջադիմութեան :

Աղարէկեան	Մարկոս	Էֆէնտի
Գրիգորեան	Թագւոր	»
Թէրզեան	Թովմաս	»
Շնորհքեան	Երուանդ	»
Վէմեան	Յակոբ Գ.	»
Տէրոյէնց	Ատովմ	»
Ֆրէնկեան	Խորիկ Օրիորդ	

### ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ք. Սամոն. Ա. Պ. ի ձեռօք ղլկուած դրամն 60 զրշ. եկած է. նորէն 6 օրինակ Տնտեսի Սամոն. 2 օրինակ Տրապիզոն եւ 5 օրինակ ալ Ամսախա սկսաւ ղրկուիլ:

Մ. Յ. ջ. կ. Պարտիզակ. Տնտեսի 1 թիւէն 4 օրինակ ղրկուեցաւ. իսկ 2 թիւը սպառած է. բայց եւ այնպէս օր ըստ օրէ գոյն ուղղղներուն թիւը աւելնալուն համար պիտի ջանանք կրկին տպագրել: Զեր ցոյց տուած նոր բաժանորդներուն Տնտես չի ղրկուեցաւ, քանզի չենք կրնար մեր սպառաններէ դուրս պարտականութիւններ ստանձնել:

Մ. Մ. Էտիրնէ. Մարտ 22 թուական նամակնիդ ստացանք, Տնտեսի բաժանորդագին՝ պէտք է առնէք 15 դրչ. բօստայի ծախքով միատեղ:

Թ. Գ. Ֆիլիպէ. Մարտ 29 Զեր նամակին համեմատ ամեն ինչ կարգադրուեցաւ, շատ չնորհակալ ենք Զեր աջակցութեանցը համար, բաժանորդագրութեանց վճարման մասին՝ Զեր համար գիւրագոյնը տնօրինեցէք:

### Հ Ն Թ Ե Բ Ց Ա' Ղ Բ

Տ Ն Տ Ե Ս Ն յանձնարարեցէք Զեր բարեկամաց.  
Թերթն աժան է և օգտակար ամեն ընտանեաց.

Բաժանորդագին  
Վեցամսեայ ՀԻՒԳ դրուշ միայն.

### Ց Ո Ւ Ց Ա Կ

Արեւելեան Տնտեսական Միութեան բաժանորդաց կողմանէ 1887 մարտ 9է մինչեւ առլրիլ 11 ( Միութեան կազմակերպութեան Բ. տարւոյ 4<sup>րդ</sup> շաբաթէն մինչեւ 5<sup>րդ</sup> շաբթուան վերջը ) տեղի ունեցած շաբաթական վճարմանց, որոց ընդհանուր գումարն՝ ինչպէս կը տեսնուի՝ եղած է 15420 զրշ:

Թիւ անձի	Վնար. Դ.թ.								
1	60	82	60	177	40	261	20	535	250
2	50	85	110	178	20	264	60	538	40
3	80	83	50	180	90	266	80	541	50
4	160	86	50	181	40	267	60	542	40
5	160	87	480	182	80	270	40	543	500
9	140	88	50	184	80	271	70	543	20
11	40	89	50	186	50	272	100	547	80
12	60	90	60	187	40	275	20	548	20
15	50	92	40	188	260	277	20	549	80
14	80	93	60	190	60	280	40	550	10
17	60	94	50	191	40	281	70	551	40
18	70	95	50	192	40	282	80	552	100
21	20	97	40	193	70	283	180	553	100
25	40	104	80	196	40	284	60	554	40
24	40	103	60	197	40	285	50	556	40
51	40	107	40	200	10	286	50	559	60
52	40	115	40	201	150	289	20	561	40
54	20	117	100	202	10	290	40	564	60
55	50	118	40	207	100	291	270	565	80
56	50	120	40	208	40	292	50	566	60
59	100	124	20	212	90	295	40	570	140
45	120	125	110	215	60	296	20	574	90
44	120	126	80	214	40	298	450	575	40
46	120	127	40	218	40	299	100	576	60
48	60	129	400	222	80	500	60	580	170
49	50	131	140	225	40	507	160	582	60
50	20	132	50	224	20	512	50	587	50
54	80	138	90	227	20	513	180	588	20
57	60	139	20	228	20	514	100	589	80
59	60	141	60	251	20	515	40	591	250
65	470	142	60	255	110	516	100	594	60
63	20	144	140	256	20	517	510	595	40
66	20	147	100	258	500	518	60	597	20
69	80	153	20	241	50	519	60	599	100
70	40	157	20	246	20	521	70	400	90
75	20	161	20	249	20	522	100	401	120
77	50	162	40	250	80	523	80	7.թ.	15420
78	50	163	60	251	60	525	60		
79	40	164	150	255	60	526	20		
80	320	163	40	256	240	527	60		
81	50	170	40	257	90	528	50		

### ԳՈՐԴ (ԽԱԼԻ) ԳՈՐԾԵԼ

Գերմանիոյ Սէնթ Կալընի վաճառականաց դպրոցին մէջ գորդ գործելու դաս կը տրուի Յօի չափ տիկնանց եւ գործաւորուհեաց։ Հասարակութիւնը մեծ եռանդով կ'աշխատի այս նոր ձեռարուեստի տարածմանը։ զանազան ընկերութիւններ ներկայացուցիչներ զրկած են եւ հեռաւոր գաւառներէ աշակերտուհիներ եկած են գործելու — արհեստը սորվելու եւ պէտք եղած կազմակերպութիւններուն (organisation) վերահասու ըլլալու համար։ Նոյնպէս Բլաուէնի մէջ համբաւաւոր տուն մը մեծ յաջողութեամբ կ'աշխատի։ Զմիւռնիոյ գորդեր շինել տալով, ժողովրդեան առանձին գործ մը բանալու։ Գորդեգործութեան արհեստը արդէն դիւրին է գործելու համար։ չափազանց դիւրին գործելու մէկ նոր ասեղ մ'ալ հնարելով եւ՝ հին արհեստագործութեան դէմ ուրիշ շատ դիւրութիւններ ալ ունենալով, այժմ կարելի եղած է գործել ցարդ եղածէն շատ աւելի արագ եղանակաւ։ Գորդերու տակի գանավաները շինելու համար՝ վերոյիշեալ գործատունը նոր թեղիեաններ հաստատել է, որոց վրայ աննման հաստատուն կտաւ մը կը գործուի, որ նախկին շինուածները բոլորովին մութը կը ձգէ։ Բարձրագոյն արհեստից մասնագիտական գծագրութեան դպրոցին մէջ ալ յատկապէս գծագրութիւններ կը պատրաստեն, որոց համեմատ գորդեր պիտի շինուին եւ ի ցոյց դրուին հասարակութեան, եւ զանոնք շինելու եղանակը պիտի ուսուցուի տանուն։ Շատ փափափելի է որ այս ջանքերն՝ նպատակին իրականացման առաջնորդէին, քանզի մեծ յոյս կոյց թէ գորդեգործութիւնը նոր ապրուստի միջոց մը պիտի բանայ ժողովրդեան։ Առէքրպակի մէջ Բօլէնցի պաշտօնի վրայ գտնուող հարիւրապետը հրաւէր կը կարդայ հասարակութեան որ այս արհեստը սորվին եւ սոյն նպատակաւ ի Բլաուէն ճամկորդովին ՅՈ մարք նուէր կը խստանայ։

ԼՐԱԳԻՐ ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ Ի ՊԱՏԸՆ

Վերոյիշեալսողերը կարդացողն անտարակոյս պիտի սքանչա-

Նայ Գերմանացւոց եռանդին վրայ որ ամեն կերպիւ կ'աշխատին արհեստներն իրենց երկրին մէջ յառաջացնելու համար բայց միանգամայն պիտի ցաւի մեզ հետ՝ թէ մեր նախկին անհամար արհեստից մեզ մնացած մէկ քանի կտորներն ալ պիտի առնուին հետզհետէ մեր ձեռքէն, քանի որ մենք անկարող կը գտնուինք զայնս յառաջ տանելու : Արհեստից յառաջադիմութեան օգնողներն իրեւ հայրենեաց բարերարք կը նկատուին ամեն տեղ, ուստի պէտք է երախտադէա ըլլանք Վանք . Նուրեան է ֆէնտիլ որոյ ջանից չնորհիւ կրցաւ հաստատուիլ Բերայի աղջկանց արհեստական դպրոցն, արդեօք կարելի չ'անդ՝ դաս մ'ալ գորգեգործութեան վրայ յաւելցնել, քանի որ այդչափ գիւրին եւ շահաւոր կը նկատեն Եւրոպացիք այդ ձեռագործն : Այս խնդիրն նաեւ մեր բարեկամ Մեծ . Կիւմշեան Յովհաննէս է ֆէնտիլ ուշադրութեան կը յանձնարարենք՝ գիտնալով թէ նա զաւակ մ'ունի Գաղղիոյ մէջ տարապագործութեան արհեստն ուստանող, գուցէ այս ձիւղն ալ կրնայ օգտակար ըլլալ թէ իրեն եւ թէ մեր երկրի արհեստուորներուն համար :

8. Ա.


### ԽԼՈՒՐԴՆԵՐԸ (\*) ԶՆՉԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Մոլոր ջուրի մէջ պէտք եղածին չափ խաչ՝ կեղեւը ելած ընկաւզը ( ճեղիզ իչի ) եւ խլուրդի ծակերուն մէջ լեցուր երկրկու կտոմ երեքական հատ . խլուրդները ծակերուն մէջ բնակելով՝ կուտեն ընկաւզները եւ խայոյն կը սատկին, քանզի մոլոր ջուրը թոյնի աղդեցութիւն ունի իրենց համար : Յայտնի է որ խլուրդները իրենց ծակերը բացած ատեն ծակերուն բերանը կը դիզեն հանած հողերնին, վասնորոյ ծակերը բանալու համար նախ այս հողերը մէկդի առնելու է :

(Քչոսթէպէկ կամ եէր սըչանը) :

## ԱՐՏԵՐՈՒԻ ՄՈՒԿԵՐԸ ԶՆՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առ չի մարած կիր եւ պարզ ձերմակ շաքար՝ երկկոտքն  
ալ փոշի, հաւասար մտութով իրար խառնէ եւ՝ մէկ մէկ  
ձեռք լեցուն, դիր արտին մէջ մուկերու ծակին մօտ մուկը  
շաքարին սիրոյն կիրն ալ միասին կուտէ, եւ ներսի կրակէն  
կոտիպուի ջուր խմելով ճամփիւ:



## ՀԱԻԵՐՈՒԻ ԿՈՏՈՐԱԾ

Ի ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹԻՒ 21 ՀԱՐՑՄԱՆ

Շիրինեան էֆէնտիփի հարցումը ներկայ Տնտեսին մէջ ալու-  
լուելու համար ձեռագիրը ապարան խրկենէս յետոյ՝ մտածե-  
լով թէ խնդիրն ստիպողական եւ կարեւոր է ։ ինչորէս Պան-  
տըրմացւոց նոյնպէս եւ ընդհանուր գաւառացւոց համար,  
արժան դատեցինք ջանալ պատասխանն ալ ի միասին հրա-  
տարակելու ։ ուստի ուղղակի վսեմ երկրագործական տնօրէնի  
դիմելով եղելութիւնն իմացուցինք եւ հետեւեալ պատաս-  
խանն ստացանք ։ թէ հաւերու յիշեալ հիւանդութիւնը մար-  
դոց չի վկասեր եւ թէ առաջքն առնելու համար սա պարզ  
միջոցն խկայն գործագրելու է, այսինքն՝ որ տեղ որ դէպք  
մը պատահի, հաւերն անմիջապէս հաւնոցէն գուրս հանելով  
հաւնոցին տակն ու վրան ալէկ մը մաքրելու է հողերն քեր-  
թելով, յետոյ ամեն կողմը ձերմակ կիրով պատանա ընելու է ։  
Ասկից զատ Ամասեան էֆ ։ յայտնեց նաեւ թէ հեռագրաւ  
խկայն հրաման պիտի տայ Պանարմայի երկրագործական Տե-  
սուչ Աղսթոն էֆէնտիփի որ խնդիրն արհեստական տեսակէ-  
տով քննէ եւ պէտք եղած գարմաններն տնօրինելով աստ  
տեղեկագրէ ։ Յօգուտ ընդհանրութեան՝ վսեմ Ամասեան է-  
ֆէնտիփի այս անմիջական տնօրինութիւնը ապացոյց է իւր

Ճիշդ եւ ազգու պաշտօնավարութեան, իւր մարդասիրական զգացմանց եւ իւր մասնագիտական բարձր առաջանդին, ուստի ընդհանրութեան կողմանէ մեր խորին չնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը կը յայտնենք հրապարակաւ։

Յ. Ա.

## ԱԶԴ

Յետ այսորիկ ՏՆՏԵՍԻ վերաբերեալ ամեն գրութիւնք ալէտք է ուղղուին հետեւեալ հասցէին,

Ա.Ա.

Տնօրինութիւն ՏՆՏԵՍ ամսագրի  
Քիւրէկնիլէր, Զիվէր-Պէյ-խան, թիւ 14, Ղալարիա

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Administration de la Revue «DENDÈSS»

Zivér-Bey-Han, N. 14. Galata.

CONSTANTINOPLE